ՄԱՐՏԻՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Ազատագրում, *գիրք 3. Սպարապետ, Ե., «Այսօր» հրատ., 2010, 768 էջ:*



Աշխատությունը համանուն եռագրության եզրափակիչ մասն է, որն ամբողջացնում է նախորդ երկու հատորների (Ազատագրում, Ե., 2003: Ազատագրում, Ե., 2006) հեղինակային մտահղացումն ու իրացումը: Գիրքը նվիրված է արցախյան ազատամարտին և, ըստ էության, ընդգրկում է բավականաչափ թարմ անցյալի՝ մեր ժողովրդի ազատագրական պայքարի ու հաղթական գոտեմարտի - պատմությունը՝ սկսած 1988 թվականից: Մ. Բաղդասարյանն այդ պատմության ինքնատիպ տարեգիրն է, որի պատումն իր բազմաթիվ դրվագների ամբողջության մեջ, համայնապատկերի ծավալներով ընթերցողի մեջ ամրակայում է այն գիտակցությունը, որ արցախյան պատերազմը, որքան էլ ոչ հեռու, այսուհանդերձ, անցյալ չէ, ավելին, այսօր դրա հաղթական ելքն իր խոր կնիքն է դրել մեր կեցության և ընթացքի վրա:

Այն հուսադրում է հայ մարդուն որտեղ էլ ապրելիս լինի նա՝ հայրենիքում թե արտերկրում, որ մեր ժողովուրդը, պատմության մեջ այս էլ որերորդ անգամ, ապացուցում է հայրենիք ունենալու և այն պաշտպանելու իր բնականոն իրավունքը:

Գիրքը գրված է պարզ, անպաճույճ լեզվով, և հեղինակը, դրան միանգամայն համապատասխան, քարոզելու կամ ուսուցանելու ոչ մի հավակնություն չունի՝ հակառակ իր ունեցած անվիճելիորեն ընդարձակ իրազեկությանը: Նրա շարադրանքը կարծեք նման է մենախոսության, որ տիրապետող է անգամ բազմաթիվ զրույցների տրամաբանության մեջ, երբ հեղինակը մտազբաղ, զրուցում է ինքն իր հետ՝ ընթերցողին հասցնելու իր դիտարկումները, հաղթահարած կասկածներն ու հակասությունները՝ լավատեսության ու հուսադրումների շողերի ներքո, զարմանալի անկեղծությամբ ու անմիջականությամբ: Շարադրանքում միահյուսված են պատումը, այուժետային բազմաթիվ ճյուղավորումները, ազատամարտի և ազատամարտիկների ճակատագրերի պատմությունը՝ դեմքերի ու դեպքերի անմեկին վերարտադրությունը, մերթ ընդմիջարկված պատմական անցյալին ուղղված հեղինակային շեղումներով, բայց և միշտ՝ սովորական, նաև դրամատիզմով ու ողբերգականի դարանին վարժված մարտնչող հերոսների դիմանկարներով: Այստեղ ի հայտ է գալիս Մ. Բաղդասարյանի հեղինակային խառնվածքի մի բնութագրական կողմը՝ ռոմանտիկան, այլ կերպ, հավանաբար, չէր կարող լինել գործողությունների այն արագընթաց հոսքը վերարտադրելիս, երբ զգացումն ու կամքը հայ մարդկանց միավորում էր խմբերի ու ջոկատների մեջ, ջոկատներին՝ միավորումների մեջ, և որոնք պետք է հասցնեին ազատամարտի բանակի կազմավորմանը:

Գիրքը նվիրված է Սպարապետ Վ. Սարգսյանի՝ արցախյան պատերազմի այդ ականավոր դեմքի գործունեությանը, բնականաբար, հագեցած նաև կենսագրական դրվագներով, և որտեղ ի հայտ են գալիս նրա բնավորության հատկանշական գծերը՝ խառնվածքի ու աշխարհընկալման ամենատարբեր կողմերով: Իրենց ամբողջության մեջ դրանք ներկայացնում են Վ. Սարգսյանի անհատականությունն ու ամեն ինչ հայրենիքին տրամադրելու բնածին պատրաստակամությունը: Հեղինակին հաջողվել է ըստ ամենայնի բացահայտել նրա հոգևոր աշխարհն ու գործողությունները՝ իբրև ազատամարտի կազմակերպչի, հրամանատարի և մարդու՝ չդադարող հրապուրանքով ու ճշմարտացիությամբ: Սպարապետի իրական, բայց և հեղինակի ոճի շնորհիվ վիպականացած կերպարը շատ բանով պայմանավորել է այս գրքի անվիճելի հաջողությունն ու համոզչությունը: Եվ այս իմաստով Վ. Սարգսյանը բնավ առանձնացած չէ: Նրա հետ միասին գրքում գործում, կռվում, զոհվում կամ հաղթանակի բերկրանքն են վայելում իրենց ժողովրդի պատիվն ու ապագան պաշտպանելու ելած ազատամարտիկները: Առհասարակ արցախյան պատերազմին նվիրված գրքերի մեջ խնդրո առարկա աշխատությունն առանձնանում է իրական և ժամանակի հետ պատմական դարձող կերպարների հարուստ պատկերասրահով, որի նկարագիրն աչքի է ընկնում իր հավաստիությամբ, տարբեր խառնվածքներն ու անհատականությունները միավորող նպատակների միասնությամբ: Վ. Սարգսյանի կերպարը մեծապես նպաստել է պատերազմած այս սերնդի կյանքն ու կռիվն իմաստավորելու՝ հեղինակի ազնիվ ջանքերի իրացմանը: Վերջինիս հաջողվել է ցույց տալ Վ. Սարգսյանին՝ նրա միջավայրում, իր տարերքի մեջ՝ կենսագրական բնորոշ հանգամանքներում, վերհանել նրա դերակատարությունը հայկական բանակի լինելության ու կայացման գործում: Գրքում աստիճանաբար թանձրացող ուրվագծերով է բացահայտվում հատկապես այս վերջին իրողությունը, որ հաճախ նույնանում է բանակի ստեղծման պատմության հետ՝ առանձին խմբերի տարերային գործունեությունից մինչև ժամանակակից մարտունակ բանակի հայտնությունը արցախյան պատերազմի բոլոր ճակատներում: Այստեղ ևս գործ ունենք մի յուրահատկության հետ՝ գրեթե միշտ ականատեսի անմիջականությամբ հեղինակը վերարտադրում է «Հատուկ գունդ», «Կոռնիձոր», «Սասուն», «Լճափ», «Լույս», «Վանաձոր» և ուրիշ շատ ջոկատների կազմավորման ու ռազմական գործողությունների պատմությունը: Մասնավորապես նշվում է, որ բանակաշինության գործում նույնպես կարևոր նշանակություն ունեցան «Մալաթիա», «Արաբո» և «Քաջարի» ջոկատները, 5-րդ բրիգադը, Չարենցավանի, Գորիսի գումարտակները, «Մեծն Տիգրան» գունդը և այլ միավորումներ:

Աշխատության մյուս արժանիքներից կցանկանայի առանձնացնել հայրենասիրական մեծ լիցքը, որով լեցուն են նրա իրական հերոսները՝ հասարակ մարտիկից մինչև գեներալ, խրամատում կռվող անփորձ ազատամարտիկից մինչև ազգային բանակին զինվորագրված խորհրդային հայազգի սպաներն ու ռազմական մասնագետները: Ընդսմին, հեղինակը հայրենասիրության դրսևորումները բնավ չի հասցնում պաթետիկայի կամ մերկապարանոց քարոզչության, այլ այն հայտաբերում է որպես կենսազգացողություն, անհատին ներքնապես հատուկ և բնականոն մի բան: Դրանով ապրող ազատամարտիկները ուշադրություն չեն հրավիրում իրենց վրա, սակայն ընթերցողը շարունակ հիշում է նրանց և թեկուզ ակամա՝ մտահոգվում ու ապրում նրանց ճակատագրով:

«Ազատագրման» մյուս կարևոր առանձնահատկությունը, կարծում ենք, նրա արժանահավատության մեջ է, ոչ միայն մարդկանց ճշմարտացի պատկերման, այլև փաստերի ու իրադարձությունների հավաստիության մեջ: Այստեղից՝ այս գրքի՝

որպես սկզբնաղբյուրի նշանակությունը, որի հիմքում ընկած են իր՝ հեղինակի դիտարկումները, շատ դեպքերում ականատեսի աչքերով մարդկանց կենսագրական դրվագների ու իրադարձությունների զարգացման համոզիչ պատկերը:

Հեղինակային իրապատում շարադրանքը ստանում է ողբերգական բնույթ, երբ անդրադարձներ են արվում զոհված ազատամարտիկներին, որոնց նվիրական անունները հեղինակը փոխանցում է գալիք սերունդներին:

Մեկ առանձնահատկություն ևս, որ ունի այս գիրքը՝ իբրև բազմաշերտ փաստերի ու իրողությունների հանրագումար: Այն կարող է շռայլ տվյալներ ու առհասարակ տեղեկատվություն տրամադրել արցախյան գոտեմարտի մասնակիցների ու ռազմական շատ իրադարձությունների վերաբերյալ և, ինչպես ասվեց, միանգամայն ճշմարտացի: Դժվար է պատկերացնել սույն թեմայով գրվելիք որևէ աշխատություն, որը կշրջանցեր «Ազատագրումը»՝ մեր ժողովրդի մղած այս վերջին ազատամարտի հարուստ տարեգրությունը:

Գիրքն ունի նաև, մեր կարծիքով, որոշ թերություններ, որպիսիք գրեթե անխուսափելի են այսչափ տարողունակ ու մեծածավալ նյութի դիմադրությունը կոտրելու պայմաններում: Երբեմն հանդիպում են անավարտ սյուժեներ, ոչ նպատակասլաց դիտարկումներ և այլն: Ցանկալի կլիներ գրքի խմբագրման շատ ավելի բարձր կուլտուրա, հատկապես այն բազմակողմանի և ընդգրկուն աշխատանքի համեմատ, որ իրականացրել է անխոնջ հեղինակը: Այս ամենով հանդերձ (որ հուսանք, Մ. Բաղդասարյանը հաշվի կառնի իր հետագա հրապարակումներում), «Ազատագրում» աշխատությունը մնում է կարևոր էջ՝ արցախյան ազատամարտին նվիրված հրապարակումների շարքում, իբրև ակնառու և մնայուն երևույթ:

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ